

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզպետարանը հայտարարում է բաց մրցույթ «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» և «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար: Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները պահանջվող ներքոհիշյալ փաստաթղթերը ներկայացնում են Սյունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին

ա) դիմում

բ) մեկ լուսանկար 3x4 չափսի.

գ) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.

դ) ինքնակենսագրություն.

ե) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի քաղաքացիները նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները/.

զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ /լրացված/.

է) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

ը) հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ / դրանց առկայության դեպքում/.

թ) բնութագիր՝ վերջին աշխատավայրից /եթե կազմակերպությունը չի լուծարվել/.

ժ) տեղեկանք այն մասին, որ ինքը չի տառապում այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ պաշտոնում նշանակվելու դեպքում ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը.

Մրցույթը կանցկացվի 2021 թվականի մարտի 22-ին ժամը 11:00-ին «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» և ժամը 15:00-ին «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար, ՀՀ Սյունիքի մարզպետարանի շենքում /ք. Կապան, Նժդեհի 1/.

Տնօրենի ընտրության

1/ պարտադիր պայմաններն են՝

ա. համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն.

բ. ծեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

գ. իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /այդ թվում՝ Հայաստանի հանրապետության Սահմանադրության, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտեր/.

դ. կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն.

2/ լրացուցիչ պայմաններն են՝

ա. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

բ. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

գ. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

դ. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.

ե. ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

զ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով.

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00 – 16:00 /ընդմիջում՝ ժամը 13:00-14:00/, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից, ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին, հեռ. 0285-4-42-75:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2021 թվականի փետրվարի 19-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

13.01.2021թ.